ՀՏԴ 94 (323.1: 070) *Պատմություն*

Սուսաննա Սերոբյան,
ԵՊՀ Հայաստանի հարակից
երկրների պատմության ամբիոնի ասիստենտ
serobyansusanna@mail.ru

ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 1988Թ.ՄԱՐՏ ԱՄՍԻՆ (ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանդը, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը:

Հեղինակը քննության է առնում խորհրդային կենտրոնական մամուլի՝ սումգայիթյան իրողություններին վերաբերող հրապարակումները: Խորհրդային կենտրոնական մամուլը ի սկզբանե ապակողմնորոշեց ընթերցողին՝ խեղաթյուրելով փաստերը և չտալով սումգայիթյան ողբերգության իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը, չորակելով այն որպես ցեղասպանություն: 1988թ. մարտ ամսին խորհրդային մամուլը չապահովեց բազմակարծություն և հանրույթի ու տեղեկատվության իրական կապ՝ չլուսաբանելով սումգայիթյան ողբերգության արմատները և պատճառահետևանքային կապերը:

Բանալի բառեր *- Արցախ, ինքնորոշում, հիմնախնդիր, արդարություն, Սումգայիթ, զանգվածային, ցեղասպանություն, մամուլ, կեղծիք, խեղաթյուրում, ապակողմնորոշում, պայքար:*

Сусанна Серобян

СУМГАИТСКАЯ ТРАГЕДИЯ В СОВЕТСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ ЗА МЕСЯЦ МАРТ 1988Г.

С 27-29 февраля 1988 года в многонациональном Сумгаите, находящемся в двадцатипяти километрах от Баку , произошла резня армянского населения, которая потрясла цивилизованное общество.

Автор рассматривает те публикации советской периодической печати, которые касались сумгаитских событий.

Советская центральная пресса изначала дезориентировала читателя, искажая факты и не давая юридическую, политическую и моральную оценку сумгаитскому геноциду.

Советская периодическая печать за месяц март 1988 года не смогла обеспечить плюрализм мнений и прямую связь между читателем и информацией. В прессе не были освещены как причины, так и последствия сумгаитской трагедии.

Susanna Serobyan

SUMGAIT TRAGEDY IN THE SOVIET PERIODICAL PRESS IN MARCH 1988

From February 27-29, 1988 in multinational Sumgait, located in 25 kilometers from Baku, took place a massacre of the Armenian population, which shocked the civilized society. The author considers those publications of the Soviet press release that referred to the Sumgait events. Central Press disoriented reader, distorting the facts and not giving legal, political und moral assessment of Sumgait genocide. The Soviet press was not ensure diversity of opinions and a direct connection between the reader and information, not covering both causes and consequences of the Sumgait tragedy.

Արցախյան հիմնախնդիրը կյանքի կոչվեց իբրև ինքնորոշման իրավունքի վրա հիմնված, համազգային նշանակություն ունեցող քաղաքական խնդիր: Արցախյան շարժման նպատակը հայության մի հատվածի՝ իր բնօրրանում ազատ ու անվտանգ ապրելու և արարելու իրավունքի ապահովումն էր և, որպես դրա իրականացման վստահելի երաշխիք, ԼՂԻՄ-ի՝ Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս բերումն ու վերամիավորումը մայր Հայաստանին:

Այն ժամանակ, երբ ողջ հայությունը սահմանադրական ճանապարհով պայքարում էր պատմական արդարության վերականգնման համար , իսկ ԽՍՀՄ –ի ղեկավարները ճամարտակում

էին խորհրդային ժողովուրդների եղբայրության ու բարեկամության մասին և հավաստիացնում, թե իրենց նպատակն է կարգավորել չլուծված կամ արհեստածին լուծում ստացած հիմնախնդիրները, ադրբեջանական իշխանությունների կողմից կյանքի կոչվեցին մեղադրանքները, սպառնալիքներն ու բռնությունները, ավելին՝ խայտառակ ու ամոթալի, քաղաքակիրթ հանրությանը բնորոշ պատվի ու բարոյականության համակարգից դուրս, մարդկության դեմ ուղղված ամենամեծ հանցագործությունը՝ **ցեղասպանությունը:**

Արցախյան հիմնահարցում խորհրդային կուսակցական – պետական դիրքորոշումը, ԶԼՄ–ներում հայ – ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ օպերատիվ ու անկողմնակալ տեղեկատվության մշտական բացակայությունը, իրողությունների անտեսումը կամ միտումնավոր խեղաթյուրումը խրախուսեցին ադրբեջանական իշխանություններին՝ ծրագրելու և իրականացնելու ցեղասպանության գործողությունները Սումգայիթում, որոնց նպատակն էր ահաբեկման ճանապարհով ստիպել հայությանը ետ կանգնել Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու արդարացի պահանջից:

1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանդը, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը: Իշխանությունների կողմից սանձազերծված հակահայկական քարոզչությունը լայն արձագանք գտավ <<ինտերնացիոնալ>> հորջորջվող Սումգայիթում, ուր ադրբեջանական խուժանը տեղի կուսակցական – պետական մարմինների հովանավորությամբ ու թողտվությամբ, կրոնական մոլեռանդությամբ և թյուրքական իր ձեռագրով, <<Մահ հայերին>> կարգախոսով , ամենավայրագ, բարբարոս, տմարդի ու ստոր միջոցներով երեք օր անընդմեջ արյան խրախճանքի զոհ դարձրեց քաղաքաբնակ հայությանը: Ծանր վիրավորվեցին ու խոշտանգվեցին հազարավոր անպաշտպան մարդիկ: Ջարդարարների գործողություններն ուղեկցվեցին հայերի բնակավայրերի ավերումով և անզուսպ թալանով: Միութենական կենտրոնական իշխանությունը միայն փետրվարի 29-ի գիշերը զորք մտցրեց Սումգայիթ՝ քաղաքից դուրս բերելով ողջ մնացածներին: Բաքվի մոտ տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումներն <<ուշացան>> ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ եղավ հայ ազգաբնակչության կոտորածն իրականացնելու համար: Պաշտոնական տվյալներով 220 հազար բնակչություն ունեցող քաղաքի 18 հազար հայերից զոհվեց 27-ը, սակայն փաստացի ՝ 100-ը: Ավելի քան 3 հազար փախստական ապաստանեց Հայաստանում, մյուսները ցրվեցին խորհրդային երկրով մեկ:[1] Փաստորեն ԽՍՀՄ կենտրոնական մարմինները և ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ Արցախյան հիմնախնդրում հնարավոր չէ քաղաքական միջոցներով կասեցնել հայերի՝ օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, գործի դրեցին ուժն ու բռնությունը՝ ոտնահարելով համամարդկային իրավունքը:

Երեք տասնամյակ է մեզ բաժանում այդ ողբերգությունից: Եվ մեր օրերում , երբ արձանագրում ենք համազգային պայքարի կարևոր նվաճումը՝ Արցախի Հանրապետության դե ֆակտո գոյությունը, երբ Արցախյան հիմնախնդրի միջազգայնացման պայմաններում նրա խաղաղ ու վերջնական լուծման հիմնական խոչընդոտը դարձյալ մնում է ինքնորոշման իրավունքի ստորադասումը տարածքային ամբողջականության սկզբունքին, երբ հիմնախնդրի չկարգավորված լինելու պարագայում շարունակվում են ադրբեջանական ագրեսիվ նկրտումները և Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության շրջափակումը, երբ ցեղասպանության հրեշավոր քաղաքականության դատապարտումը մնում է միջազգային հանրույթի օրակարգում, առավել, քան երբևէ կարևորվում է Արցախյան շարժման նոր փուլում տեղի ունեցած իրադարձությունների անաչառ ու անկողմնակալ վերլուծությունը, մասնավորապես խորհրդային պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլում սումգայիթյան ողբերգությունը ներկայացնող հոդվածների բովանդակության քննախոսությունը և պատմական ճշմարտության վերհանումը:

Հարկ է նշել, որ Արցախյան շարժման նոր փուլում, ի տարբերություն նախորդների, երբ խորհրդային ԶԼՄ – ներում բացարձակ լռության էր մատնվում Արցախյան հիմնախնդիրը, խորհրդային պարբերական մամուլում ի հայտ եկան սոսկ հաղորդագրություններ, սակայն ոչ թե Արցախյան հիմնահարցի պատմական հիմքը և 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ –ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի որոշումն ու նրա կենսագործման շուրջ ծավալված օրինաչափ, բնական ու տրամաբանական պայքարը լուսաբանող, այլ պայքարի էությունն ու բովանդակությունն

[1] Տե՛ս ,, Сумгаит... Геноцид... гласность'', Е., 1989, стр.30:

աղճատող ու խեղաթյուրող: Այդ հաղորդագրությունները վառոդի տակառին մոտեցված լուցկու դեր կատարեցին՝ կեղծելով ու ապատեղեկատվություն սփռելով և դրանով իսկ սրելով ազգամիջյան հարաբերությունները և իրավիճակը դարձնելով պայթյունավտանգ:[1]

ԽՍՀՄ –ում հռչակված հրապարակայնության պայմաններում հարկ էր հրապարակավ դատապարտել տմարդի գործողությունը, հանրույթի և տեղեկատվության միջև ապահովել անմիջական և ուղղակի կապ՝ համապարփակ լուսաբանելով տեղի ունեցած իրադարձությունները և տալով դրանց անկողմնակալ և առարկայական գնահատականը: Սակայն կոմունիստական խորհրդային յոթանասունամյա գաղափարախոսության առկայության պայմաններում, երբ հիմնախնդիրների առարկայական ու անկողմնակալ վերլուծության ցանկացած փորձ դատապարտված էր, երբ <<հրապարակայնությունը>> Արևմուտքում ավելի օպերատիվ էր գործում, քան ներմիութենական տարածքում, և Խորհրդային Միության մասին հրատապ, օրախնդիր լուրերը ավելի շուտ հասանելի էին դառնում արտասահմանյան, քան խորհրդային ընթերցողին, փետրվարյան արյունոտ դեպքերի հետ կապված բազմիցս դրսևորվեց մամուլի քաղաքական սնանկությունը. <<վերակառուցման լուսարձակ>> խորհրդային մամուլն ի սկզբանե միտումնավոր կեղծելով Արցախյան հիմնախնդրի էությունը՝ նաև խայտառակ ու ամոթալի խեղաթյուրման մատնեց սումգայիթյան դառը ճշմարտությունը վերհանող փաստերը:

Եվ, ինչպես իրավամբ նկատել է տնտեսագիտության դոկտոր Վ. Շեյնիսը, <<Սումգայիթով խլացվեց հրապարակայնությունը>>[2]: Սումգայիթյան հանցագործությունը չորակվեց որպես **ցեղասպանություն:**

Սումգայիթի հայության հանդեպ իրագործված սադիստական դաժանության և գազանությունների մասին լուրերը հանրույթի շրջանում պտտվել սկսեցին գարնան առաջին իսկ օրվանից, երբ Հայաստանում և ԼՂԻՄ –ում հայությունը՝ ականջալուր ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի՝ քաղաքացիական հասունություն և համբերություն ցուցաբերելու և հասարակական կարգը պահպանելու կոչին, դադարեցրել էր հանրահավաքները, գործադուլները և վերականգնել իր նորմալ աշխատանքային առօրյան:

1988թ. մարտի 1-ին կուսակցական – պետական մարմինների ուղղորդմամբ, դիվանագիտական նրբությամբ, տասը տողանոց հաղորդագրությամբ սումգայիթյան իրադարձությունների մասին << իրազեկեց>> կենտրոնական մամուլը[3]:

Մարտի 5-ին հանրապետական <<Կոմունիստ>> թերթում տպագրվեց ՏԱՍՍ-ի հաղորդագրությունն այն մասին, որ Սումգայիթում խուլիգանական տարրերի սադրիչ գործողությունների հետևանքով , որոնք որակվում էին որպես անկարգություններ, թալանվել ու ավերվել են մարդկանց ունեցվածքն ու բնակարանները[4]:

Մարտի 6-ին, երբ սումգայիթյան աղաղակող և սահմռկեցուցիչ փաստերի ճնշմամբ իշխանությունների կողմից փոքր – ինչ մեղմացվեց գրաքննությունը, տպագրվեց կենտրոնական մամուլի հաղորդումն այն մասին, որ Սումգայիթում խուլիգանական արարքներին զոհ են գնացել տարբեր ազգությունների 31 մարդ[5] :

Մարտի 15-ին ԼՂԻՄ մարզկոմի և մարզխորհրդի օրգանում տպագրվեց անհատական թռշակառու, ԽՍՀՄ լրագրողների միության անդամ Գ.Այվազյանի բաց նամակը, ուր հեղինակը իր խոր վրդովմունքն էր հայտնում՝ տեղական մամուլում ԼՂ հիմնախնդրի շուրջ պատմական փաստերի խեղաթյուրման, հանրույթին ապակողմնորոշող տեղեկատվության հետ կապված և սումգայիթյան սպանդը որակում էր որպես ադրբեջանական <<սև արձագանք / ռեակցիա/ >> արցախահայության արդարացի պահանջին[6]: Նամակի հեղինակն արձանագրում էր , որ փետրվարյան վերջին օրերին գազազած ամբոխի կողմից մորթված ու հոշոտված անմեղ մարդկանց արյան համար պատասխանատու են ոչ միայն սպանդը անմիջականորեն իրագործած ու դեռ ազատություն վայելող հանցագործները, այլ նաև Սումգայիթի կուսակցության քաղկոմի և գործկոմի

[1]Տե'ս А.Василевский, Туча в горах, ,,Аврора”, Л.,но.10, 1988:

[2] Տե'ս В.Шейнис, Уроки карабахского кризиса, ,, Век 20-ый и мир’’, М., но.10, 1988:

[3] Տե'ս,,Правда’’, 01.03.1988:

[4]Տե'ս ,,Коммунист’’,05.03.1988.

[5] Տե'ս,,Правда’’, 06.03.1988. Տես նաև `Известия’’, 06.03.1988:

[6] Տե’ս ,,Советский Карабах’’, ,,С позиции правды’’, 15.03.1988, но.62:

ղեկավարները, ովքեր միջոցներ չձեռնարկեցին՝ զանգվածային սպանությունները կանխելու նպատակով: [1]

1988թ. մարտի 20-ին հրապարակվեց <<Նովոստի>> տպագրության գործակալության փոխնախագահ Կարեն Խաչատուրովի <<Ինքնահանգստացման և անգործության պտուղները / մի քանի օր ԼՂ –ում/>> հոդվածը, ուր հեղինակը փորձում էր լուսաբանել Արցախյան հիմնախնդրի պատճառները՝ շրջանցելով սումգայիթյան ոճիրը և սահմանափակվելով սոսկ սթափ որոշումներ կայացնելու կոչերով և <<փետրվարյան տագնապալի օրեր>> արտահայտությամբ[2]:

Հարկ է նշել, որ Արցախյան շարժման նոր փուլում խորհրդային կենտրոնական մամուլում փաստերի կեղծարարությամբ կամ նենգափոխմամբ, շարժմանը և <<Ղարաբաղ>> կոմիտեին իր միտումնավոր գնահատականներով ի սկզբանե առանձնացավ ԽՄԿԿ գաղափարախոսության <<մունետիկ>> <<Պրավդա>>-ն, որը ազատագրական շարժումը որակելով իբրև ծայրահեղականների անպատասխանատու սադրանք, երբեք էլ չփորձեց իրապես վերլուծել և բացահայտել արցախյան հիմնախնդրի պատմական արմատներն ու էությունը: Նրա էջերում սումգայիթյան իրողություններին մարտի 6-ից հետո հաջորդ անդրադարձը Գ.Օվչարենկոյի, Զ.Կադիմբեկովի և Յու. Առաքելյանի ստորագրությամբ <<Զգացմունքներ և բանականություն /ԼՂ և նրա շուրջ իրադարձությունների մասին/ >> տխրահռչակ և սկանդալային հոդվածում էր[3]: Թվում էր, թե վերջինիս հեղինակները պետք է հանդես բերեին սկզբունքային դիրքորոշում ԼՂ և նրա շուրջ կատարված իրողությունների հանդեպ, քանի որ հոդվածում իրենց միտքն էին հայտնում, թե յուրաքանչյուր չմտածված խոսք կարող է առաջ բերել զգացմունքների, կրքերի ու հանցագործությունների նոր պայթյուն: Սակայն հակառակ Մ.Գորբաչովի՝ Հարավսլավիա այցի ժամանակ արված այն հայտարարության, որ ԼՂ-ում ոչ ոք չի բարձրացնում սոցիալիզմի ու խորհրդային իշխանության կամ ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցերը, և Արցախյան հիմնախնդիրը ուշադրությունից վրիպած զուտ էթնիկական- մշակութային բնույթի խնդիր է[4], հոդվածում <<հիմնավորվում էր>> այն տեսակետը, թե <<վերամիավորման ազնվաբարո գաղափարը ունի բացահայտ հակասոցիալիստական ոգի>> , և հայերն իրականում տեղային շահերը փորձում են վերդասել համապետականից՝ դրսևորելով ազգայնական էգոիզմ, <<բանականության կուրություն, որը աչքի կուրությունից էլ վատ է>>: Հոդվածում կատարվում էր հռետորական հարցադրում. ի՞նչ կլինի խորհրդային մյուս տարածաշրջանների, եղբայրական ժողովուրդների բարեկամության և, վերջապես, ԼՂԻՄ-ի ոչ հայկական բնակչության հետ, երբ հայերը հանրույթի իրական ժողովրդավարացումը փոխակերպում են փողոցային, հանրահավաքային ժողովրդավարության, երբ առաջին տեղում են դրվում զգացմունքներն ու կրքերը: Միաժամանակ քննադատության ենթարկելով Ադրբեջանի կուսակցական ղեկավարությանը, սոսկ ընդգծվում էր, որ <<ապրիլյան բարեփոխումների քամին չի դիպչել ԼՂԻՄ-ին>>, և վերջինիս սոցիալ – տնտեսական զարգացման անբավարարությունը փողոց է հանել մարդկանց: Անդրադառնալով ԼՂԻՄ Աղդամի շրջանում տեղի ունեցած դեպքերին, նշվում էր, որ զոհվել են երկու մարդ, տուժել՝ շատերը, իսկ սումգայիթյան ողբերգությունը ներկայացվում էր որպես զանգվածային անկարգություն, հանցավոր տարրերի գործողություն, տարրերի, որոնք, օգտվելով պայթյունավտանգ իրադրությունից, ներխուժել են հայերի մի քանի բնակարանները, բայց տուժել են ոչ միայն հայերը, այլ նաև `այլազգիներ. 32 մարդ զոհվել է , 100-ից ավելի մարդ վիրավորվել, ձերբակալվել, սակայն դա երբեք էլ չի կարող խաթարել հայ – ադրբեջանական բարեկամությունը՝ <<վեր ազգայնական էգոիզմից և ստուգված ժամանակով>>, որովհետև հանցագործներն անպայման կկրեն իրենց պատիժը, և <<Պրավդա>>-ն կպատմի այդ մասին:

Քննության առնելով հոդվածի բովանդակությունը, հարկ է նշել , որ այն ամենից առաջ աչքի էր ընկնում խոր հակասականությամբ. մի կողմից նշվում էր, որ Արցախյան հիմնախնդիրն արհեստածին է՝ առաջ քաշված <<անդրօվկիանոսյան սովետաբանների կողմից ուղղորդվող այսպես կոչված <<Ղարաբաղ >> կոմիտեի կողմից>>, մյուս կողմից էլ պայմանավորված է

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս,,Московские новости'', 20.03.1988, но.12, стр.10:

[3] Տե՛ս,,Правда'',21.03.1988,но.81:

[4] Տե՛ս,,Правда'',но.77,17.03.1988:

վերակառուցմանը ընդդիմադիր կուսակցական որոշ գործիչների գործողություններով: Հոդվածում մի կողմից երկրում ծավալվող նորացման գործընթացների համատեքստում կարևորվում էր ԽՍՀՄ ժողովուրդների ճակատագրի խնդիրը, բայց մյուս կողմից էլ՝ անտեսվում հայ ժողովրդի ստվար հատվածի ազատ ինքնորոշման իրավունքը: Հոդվածի հեղինակները իրենց պարտքն էին համարում արժևորել ԼՂ շուրջ տեղի ունեցող իրողությունները, սակայն մյուս կողմից էլ արձանագրում էին, որ դժվար է դրանք իմաստավորելը, քանի որ դրա համար անհրաժեշտ է ժամանակ: Մի կողմից անթույլատրելի էր համարվում պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելու միջոցով ազգային – տարածքային բարդ խնդիրների լուծումը, բայց մյուս կողմից էլ խոսք անգամ չէր նշվում ԼՂԻՄ մարզկոմի պլենումի `1988թ. մարտի 17-ի որոշման մասին՝ դիմելու ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյին՝ 1920-ականների պատմական սխալը վերացնելու և արցախահայերի խնդրին դրական լուծում տալու համար[1]:

Միաժամանակ հեղինակներն անամոթաբար հավասարության նշան էին դնում Երևանում, Ստեփանակերտում և Սումգայիթում տեղի ունեցող իրադարձությունների միջև՝ ընդգծելով, որ այդ տարածքներում բավարար չէ ինքնաքննադատական մոտեցումը իրավիճակների վերլուծության, գաղափարական – բարոյական ոլորտում բացասական դրսևորումների գնահատման ժամանակ: Հոդվածում ընթերցողին անհայտ էին մնում Սումգայիթի կազմակերպման իրական պատճառները, պատասխանատուներն ու իրագործողները, նաև՝ հետևանքները: Բացարձակ լռության էր մատնվում այն իրողությունը, որ ջարդերն իրագործվել են բնակչության մի հատվածի հանդեպ՝ ցեղային այլ խմբի պատկանելու համար: Սումգայիթյան ողբերգության պատճառ էր դիտվում միայն տարածաշրջանում ինտերնացիոնալ դաստիարակության պակասը: Այդ ամենն արվում էր <<միասնական տունը>>՝ ԽՍՀՄ-ը անխախտ պահելու և պաշտպանելու նպատակով: Այդ ամենը ոչ միայն անազնիվ ու անտարբեր, ոչ արհեստավարժ մոտեցում էր տեղի ունեցածին, այլև փորձ՝շրջանցելու Արցախյան հիմնախնդիրը և նրա լուծման իրական ուղին:

Վերոնշյալ հոդվածին հաջորդեց Յու. Առաքելյանի նամակը՝ ուղղված <<Պրավդա>>-յի գլխավոր խմբագիր Վ.Աֆանասևին, ուր թերթի խմբագրությունը իրավամբ մեղադրվում էր <<արջի ծառայություն մատուցելու>>, քաղաքական կարճատեսություն դրսևորելու, ճշմարտությանը անհարիր տեղեկատվություն հաղորդելու և լրագրողական էթիկան խախտելու մեջ[2]: Հեղինակն արձանագրում էր, որ վերակառուցման ընթացքում հայ ժողովուրդը դարձել է <<Սումգայիթում նեոգենոցիդի ակամա վկան>>, որ թերթում հոդվածի ներքո իր ստորագրությունը տեղ է գտել առանց իր գիտության, հետևապես ինքը այդուհետ հրաժարվում է նրան թղթակցելուց: Ի պատասխան այդ քայլի <<Պրավդա>>-ն փորձեց հերքել մեղադրանքը և իր հերթին կասեցրեց Յու. Առաքելյանի թղթակցությունը [3]:

<<Պրավդա>>-յի ոգուն հավատարիմ հոդվածներով հանդես եկավ <<Իզվեստիա>> -ն[4]: Ներքոհիշյալ երկու հոդվածներն էլ աչքի էին ընկնում արցախյան իրադարձությունների շուրջ կծծի և միակողմանի տեղեկատվությամբ՝ կամա թե ակամա վարկաբեկելով համաժողովրդական շարժումը և , դրանով իսկ, անհնար դարձնելով ըմբռնումը: Լրագրողներ Ս.Դարդիկինը և Ռ. Լինյովն արձանագրում էին << կարճ ճշմարտությունը>>՝ երկու ժողովուրդների << դարավոր բարեկամությունը փորձության է ենթարկվել >>: Հեղինակների պնդմամբ ճշմարտությունն այն էր, որ հանրահավաքներում ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու հարցը բարձրացվել էր սոցիալ – տնտեսական, մշակութային պատճառներով, որ գրող Ս. Խանզադյանը դրսևորում էր ծայրահեղականություն, երբ ասում էր՝ չի լինի Ղարաբաղը, մեզ պետք չէ և ոչ մի վերակառուցում: Նշվում էր նաև, որ տարածաշրջանում <<թնջուկը բացելու համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր, իմաստություն և հավասարակշռություն>>: Անդրադառնալով սումգայիթյան ողբերգությանը, հեղինակները հրաժարվում էին այդ ծանր իրողության կենդանագրումից՝ պատճառաբանելով, թե հրապարակայնությունը կոչված է ստեղծարար նպատակների, մինչդեռ գաղտնիք չէ, որ միևնույն փաստերը տարբեր կերպ են ընկալվում և գնահատվում Երևանում ու

[1] Տե'ս ,, Советский Карабах'', но.65,18.03.1988:

[2] Տե'ս ,,Главному редактору,,Правды'' тов. Афанасьеву В.Г.Ю Аракелян,21.03.88:

[3] Տե'ս ,, Правда'',,, Кем была нарушена журналистская этика?'', но 86,26.03.1988:

[4] Տե'ս ,,Известия'', ,,Трагедия наших дней'', 07.03.1988., но. 62.,07.03.1988 և ,, Встречи после митингов"", но.84,24.03.1988:

Բաքվում, և դրանով իսկ ավելի խաճում թնջուկը: Հոդվածագրերը հանրահավաքներից հետո իրենց հանդիպումների տպավորության ներքո արձանագրում էին, որ <<Հայաստանից Ադրբեջանում <<փրկություն փնտրողների>> սադրիչ լուրերը <<հայկական վտանգի >> մասին Սումգայիթում այնպիսի շրջապտույտ գտան, որ զորքեր մտցվեցին քաղաք, որ քաղաքում եղան տասնյակ սպանվածներ, շատ վիրավորներ ու փախստականներ, և որ այժմ բացահայտվում են մեղավորները:

Համաձայնենք հեղինակների հետ, որ հրապարակայնությունը ստեղծարար ուժ էր, հետևապես տպագիր խոսքը անհրաժեշտ էր օգտագործել՝ երկրում ծավալված հեղափոխական նորացման գործընթացները սատարելու և ընդհանուր գործին չվնասելու նպատակով: Սակայն այդ պարագայում ինչու՞ <<Իզվեստիա>>-ն հարկ չհամարեց ընթերցողներին ծանոթացնել ԼՂԻՄ –ի կոմունիստների կարծիքին, ինչու՞ չքննարկեց ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ին ընդունած որոշումը, այլ առավել կարևոր համարեց իր էջերում խոսել Հայաստանում իբր տարածում գտած, բայց իրականում այդ ժամանակ ոչ մի անգամ սատարում չունեցող, բացահայտ սադրիչ բնույթի գաղափարի՝ անկուսակցական խորհրդային հանրապետության ստեղծման մասին, կամ երբեք էլ ընթերցողին չբացատրեց, թե ինչու՞ էին գրող Ս.Խանզադյանը և այլք ընդդիմանում <<Էքստրեմիստ /ծայրահեղական/>> պիտակին, կամ էլ ինչու՞ հրապարակայնությունը չողջունեց երկրում ծավալված նորացման գործընթացը՝ Արցախյան ազատագրական համաժողովրդական շարժումը : Ինչպես նշվում էր մեկ այլ՝ <<Բանականությունը պետք է հաղթի>> հոդվածում[1], թվում էր, թե ի՞նչ կա վատ կամ սարսափելի, չէ՞ որ կարծես անցել էին այն ժամանակները, երբ ցանկացած հարցի շուրջ կարող էր լինել մեկ կարծիք, և նոր կարծիքներն ու տեսակետերը պետք է քննարկվեին անկեղծ զրույցում, ընդ որում դրանք <<հիմնավորապես մեկնաբանողի >> դերակատարումը պետք է ստանձներ մամուլը: Մինչդեռ վերջինս՝ իր բյուրոկրատական մեխանիզմով, դրսևորեց միակողմանիություն, առաջնորդվեց ավելին չասել, չարագործությունները չբացահայտել կարգախոսով և , սրանով իսկ, ի սկզբանե սև ներդրում ունեցավ՝ սրելով լարվածությունը տարածաշրջանում: Ավելին, խորհրդային պետական մամուլը իր էջերում <<բացահայտում էր>>, որ սումգայիթյան ողբերգությունը հետևանք էր այն բանի, որ տեղային շահերը վեր են դասվել համապետականից, որ <<մամուլն անտեսել է վերակառուցմանն արգելակող ուժերին>>[2] : Ընթերցողին կոչ էր արվում գործի անցնել՝ մարզում առկա տնտեսական խնդիրները լուծելու համար, քանի որ <<նոր շինությունների կառուցումը կնպաստի երկրամասի սոցիալ – տնտեսական հետագա զարգացմանը>>[3] :

<<Հանրույթում առկա տարերքը, կրքերի անկառավարելիությունն ու կատեգորիկ անհանդուրժողությունը պարարտ հող են ստեղծել սումգայիթյան ողբերգության համար>>, - այս ճշմարտությունն էր վեր հանվում լրագրողներ Յու. Վասիլկովի և Ն. Կիշկինի կողմից <<Զգացմունքները խորհրդատու չեն>> հոդվածում[4] : Հեղինակները նշում էին, որ քննությունը կպարզի, << թե ինչպես տարերքն օգտագործվեց հակահասարակական տարրերի կողմից՝ սումգայիթյան ողբերգությունը սադրելու համար, թե ինչ գին ունեցավ Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղար մուսլիմ – զադեի և այլ ղեկավարների <<ինքնահանգստացումը, իրավիճակի այնչափ իդեալականացումը, թե ինտերնացիոնալ քաղաքում չի կարող ոչ մի վատ բան տեղի ունենալ>>: Հոդվածում հեղինակներն ընդդիմանում էին մամուլի հասցեին հանդիմանությանը, նշելով, որ անսովոր իրավիճակում կարևորը առարկայորեն, ոչ միակողմանի մոտեցումն է պատահածի գնահատմանը, և կոչ էր արվում բանականության, սթափ որոշումների և փոխըմբռնման, չմոռանալու, որ վերակառուցումն իրագործվում է լենինյան ազգային քաղաքականության հետևողական հաստատման համար:

Անշուշտ, պետք է համաձայնել հեղինակների հետ, որ խորհրդային երկրում վերակառուցման շրջանում շատ բան ժառանգվել էր լճացման շրջանից, որ <<հանրահավաքային ժողովրդավարության պայմաններում յուրաքանչյուրի ճշմարտության ընկալումը տարբեր է, որ զգացմունքները վատ խորհրդատու են>>[5]: Սակայն , եթե վերակառուցման նպատակը լենինյան

[1]Տե'ս ,,Аргументы и факты'', 17.03.1988:
[2] Տե'ս,, Комсомольская правда'', ,, Гласность и право на объективность'', 25.03.1988:
[3] Տե'ս,, Труд'', ,,Пора браться за дело'', 25.03.1988:
[4] Տե'ս ,, Труд'', 26.03.1988, стр.4:
[5] Տե'ս նույն տեղում:

ազգային քաղաքականության հետևողական հաստատումն էր, այդ դեպքում ինչու՞ էր անհրաժեշտ զանց անել ազգային հարցը, ինչը հոդվածում առաջարկում էին անել լրագրողները, պատճառաբանելով, թե վերջինս <<առաջ է բերում զգացմունքներ, երևակայական և առկա փաստերի նպատակամղված մեկնություններ>>: Հեղինակները մի կողմից արձանագրում էին, որ <<խորհրդային երկրում երկրորդ պլան է մղվել այնպիսի հասկացություն, ինչպիսին ազգամիջյան հարաբերությունների մշակույթն է, բայց մյուս կողմից էլ արցախահայության արդար պահանջը որակում էին որպես << ազգային էգոիզմի ախտադարձություն /ռեցիդիվ/, և բազմակարծությանը, հրապարակայնության ու բանավեճի մշակույթին կատեգորիկ անհանդուրժողությամբ հոչակում էին հիմնահարցի լուծման մեկ ուղի՝ խորհրդային հայրենասիրության առաջնայնությունը: Հոդվածում մի կողմից նշվում էր, որ դրսևորվեց ամբոխի տարերքը, քանի որ <<տաքգլուխների համար բանական փաստարկներ չբերվեցին>>, բայց մյուս կողմից էլ սումգայիթյան ոճրագործ գազանը ենթակայորեն ու մեղմորեն որակվում էր որպես << հակահասարակական տարր>> :

<<Ո՞րն էր սումգայիթյան ողբերգության պատճառը, երբ մենք ունենք նվաճումներ ազգային քաղաքականության մեջ, ի՞նչ անել, որ հսկայական հասարակական էներգիան բացառապես ծառայի ստեղծարար նպատակների>>, - այս հարցադրումներով լրագրողներ Ա.Աֆանասևը, Դ.Մուրատովը, Ա. Մուրսալիևը և Ա. Սարգիսյանը խնդիր էին դնում իրադարձություններին մոտենալ տարբեր տեսանկյուններից և միայն հետո արտահայտել իրենց դիրքորոշումն ու վերաբերմունքը[1]: Հեղինակները չէին ժխտում , որ վերջին երկու տարում ԼՂԻՄ –ում և Երևանում ստորագրահավաքներ էին եղել՝ մարզը Հայաստանին վերամիավորելու խնդրանքով, սակայն տեղական իշխանությունները քայլեր և նախաձեռնություն հանդես չէին բերել՝ բացատրելու, երկխոսելու, իրադարձությունների ընթացքը փոխելու համար, որ անկեղծ զրույցի և պատասխանի բացակայությունը փողոց էր հանել մարդկանց: <<Հենց պասիվությունը, անհրաժեշտ փաստարկների և մարդկանց հետ ուղղակիորեն հաղորդակցվելու ցանկության բացակայությունը և կուսակցական ղեկավարների կորսված հեղինակությունը նպաստեցին նորահայտ << առաջնորդների >> ազդեցության աճին >>[2]: Հեղինակները նշում էին , որ մի բան է գաղափարի շուրջը ժողովրդական զանգվածների միավորումը, մեկ այլ բան՝ <<նույն գաղափարի մեկնությունը նրա տարբեր թարգմանիչների կողմից>> և անհանգստություն էին հայտնում, որ կատեգորիկ որոշումները միշտ էլ տագնապահարույց և տարակուսելի են:

Մեր կարծիքով պետք է արժանին մատուցել հոդվածի հեղինակներին և արձանագրել, որ 1988թ. փետրվար – մարտ ամիսներին մամուլում Արցախյան հիմնախնդրին վերաբերող հրապարակումներից վերոնշյալ հոդվածն իր գնահատականներով ու վերաբերմունքով թերևս ամենազուսպն ու անկեղծն էր, քանի որ ընթերցողին չէր մատուցում հիմնահարցի լուծման պատրաստի բաղադրատոմս, նրա հեղինակները զերծ էին մնում կատեգորիկ դիրքորոշումներ արտահայտելուց, փորձում էին գտնել հիմնախնդրի լուծման փոխընդունելի տարբերակը և վերջում հույս էին հայտնում, որ <<ինտերնացիոնալ ընտանիքում աճած, իրական ինտերնացիոնալիզմի օրինակ ցուցաբերած ժողովուրդը կցուցաբերի սթափություն և բանականություն>>: Ի հակակշիռ այս հոդվածի, <<Պրավդա>>-ն նշելով, թե <<հրապարակայնությունը չի հանդուրժում ամբոխավարություն և ամբոխավարների , և պետք է իրավիճակները մաքսիմալ օպերատիվ գնահատել>>, իրականում իր էջերում ինքն էր ծավալում ամբոխավարություն՝ շարունակելով միտումնավոր ներկայացնել դեպքերը՝ արատավորելով հայ հեղինակավոր մտավորականի անունը[3], հեգնելով վերջինիս խոսքը և մեջբերելով մասիսաբնակ ոմն Հասան օղլու միտքը՝ ում ձեռքերը կոշտուկներ ունեն, նա կիսելու բան չունի[4] :

---

[1] Տե՛ս ,, Комсомольская правда'', ,, С тревогой и надеждой'', 26.03.1988, стр.4:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս ,,Советская культура'', ,, Как живут земляки'',17.03.1988.Հոդվածում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանը իր բողոքն էր հայտնում Արմենպրեսի թղթակիցներից ՝ առանց իր գիտության, իր անունից մտքեր հղելու և <<Պրավդա>> -յում դրանք տպագրելու և , դրանով իսկ, իր անունն արատավորելու հետ կապված և արձանագրում էր, որ այդ <<օրամշակները / լրագրողները –Ս.Ս/ ... հին, մինչվերակառուցման շրջանի լոզունգներով ի չիք են դարձնում ... նոր մտածողության ձևավորումը>>:

[4] Տե՛ս ,, Правда'', ,,Братьям делить нечего'', 28.03.1988, но.88:

Ամփոփենք. 1988թ. փետրվար – մարտ ամիսներին Արցախյան հիմնախնդրում կուսակցական – պետական դիրքորոշումը հիմք հանդիսացավ մամուլում ԼՂ և նրա շուրջ իրադարձությունների կեղծ ու միտումնավոր գնահատականների: Խորհրդային մամուլում առկա հրապարակումներում սոսկ արձանագրվեց, որ խախտվել է հայ – ադրբեջանական <<եղբայրական բարեկամությունը>> , որը հետևանք է ԼՂԻՄ –ում սոցիալ- տնտեսական և մշակութային առկա խնդիրների և , դրանց հետ կապված, լուրջ դժգոհության ադրբեջանական ղեկավարության քաղաքականությունից: Խորհրդային մամուլը ոչ միայն չլուսաբանեց Արցախյան հիմնախնդրի էությունը , այլև, դրա հետ կապված, որդեգրեց սումգայիթյան ողբերգական փաստերը կոծկելու, կեղծ տեղեկատվություն տալու ուղեգիծը: Մամուլում սումգայիթյան ողբերգության պատճառ դիտվեց միայն տարածաշրջանում ինտերնացիոնալ դաստիարակության պակասը, բացարձակ լռության մատնվեց այն իրողությունը, որ ջարդերն իրագործվել են բնակչության մի հատվածի հանդեպ՝ ցեղային այլ խմբի պատկանելու համար: Ոչ միայն լռության մատնվեցին ու չդատապարտվեցին գազանությունները, այլև երաշխիք չտրվեց, որ փետրվարին ստեղծված իրողությունն այլևս երբեք չի կրկնվի: Պետական- կուսակցական մամուլում անմարդկայնորեն անգամ ցավակցական խոսք չասվեց, իսկ Սումգայիթ քաղաքի թերթերում փետրվարյան ջարդերի ու թալանի մասին չարձանագրվեց և ոչ մի տող[1]: Ավելին, ադրբեջանական մամուլը ստեղծված ողբերգական իրավիճակի <<մեղավոր>> համարեց արցախահայության արդար պահանջը, և տպագրվեց Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ որոշումը՝ <<Կոռունկ>> կազմակերպությունը լուծարելու մասին այն պատճառաբանությամբ, թե վերջինիս <<գործունեությունը հակասում է կոմունիստական շինարարության նպատակներին>>:[2] Միութենական և հանրապետական մամուլում կարևորվեց միայն ժողովուրդների բարեկամության գաղափարի քարոզչությունը: Արյունոտ մղձավանջի մասին ճշմարտությունը լռության մատնվեց ու շրջանցվեց այնպես, ինչպես սումգայիթյան իրադարձությունների նախօրեին կենտրոնական լրատվամիջոցները լռության էին մատնել փետրվարի 22-ին Ասկերանում տեղի ունեցած իրադարձությունները և ապատեղեկատվություն հաղորդել Աղդամի ու Ասկերանի բնակիչների ընդհարման մասին[3]:

1988 թ. փետրվարյան ու մարտյան օրերին Արցախյան հիմնախնդրում կուսակցական - պետական դիրքորոշումը խաթարեց հայ ժողովրդի հավատը իշխանությունների ու մամուլի հանդեպ և հանգեցրեց վերջիններիս նկատելի հեղինակազրկմանը: Նման դիրքորոշումը բումերանգի նման հարվածեց կենտրոնին, քանի որ սումգայիթյան ողբերգության մասին կցկտուր ու հակասական հաղորդագրությունների առանձին տողերը առաջ բերեցին ընթերցողների ցասումն ու արդար բողոքը, և սումգայիթյան ողբերգությունից հետո այլևս հնարավոր չեղավ լռեցնել ժողովրդին, որի պահանջն արդար էր: Սկսվեց ցույցերի, գործադուլների ու հանրահավաքների նոր ալիքը:

[1] Տե՛ս ,, Московские новости'', Тревожные недели'', но.14, 03.04.1988:

[2] Տե՛ս ,,Бакинский рабочий'', 26.03.1988 և նույն տեղում, 02.04.1988:

[3] Տես Հ.Աբրահամյան, Մարտնչող Արցախը, Գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 48: